շարի, և թէ ռոճիկ զինուորաց 'ի քաղաքապետէ յերևանու ստանայցեն, և փոխանակ նորայ ձեռնադրեսցես ոսիդ և ոսիդն քոյ 'ի ատենի տանն հայոց համարեսցի իբրև յստակ դրամ. գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց, այսմ աւուր յունվարի ամսոյ մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773։

Վկայեմք որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Միքայէլ իշխան ○
Մանուէլ Գծագիր ○

Սեղբեստրոս Արք Եպիսկոպոս երկրորդ Տանուտէր. ○
Վրթանէս Կաղնու երրորդ Տանուտէր. ○
Գալստան Կաղզվանու չորրորդ Տանուտէր. ○

ԳԼՈՒԽ ՇԺԳ.

Ամենայն ամրոց բերդօրեայք պարտ է ունիլ ամենայն ժամ պահակս երկուս վառեալ զինուք իւրաքանչ 'ի դրունս ամրոցաց և 24 զինուոր մի զօրագլուխ պատրաստ ներս դռան և սոքայ փոխարկեսցի ամենայն երկու ժամ մի անգամ թէ ցայգ և թէ ցերեկ։

ԳԼՈՒԽ ՇԺԴ.

Ոչ ոք Օտարական ելցէ և ոչ մտանիցէ 'ի